

**ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ Նունե Մովսիսյանի ելույթը
«Տարեցների սոցիալական կարիքների ինչպես նաև սոցիալական
ծառայությունների նոր մոդելների նկատմամբ տարեցների ու նրանց
ընտանիքի անդամների պահանջարկի ուսումնասիրություն» թեմայով
քննարկման ժամանակ**

09.07.2016թ.

Ողջունում եմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատուներին, մարզից վաստակած հանգստի անցած հարգարժան բնակիչներին, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին, հրավիրված ընտանիքների տասարդ անդամներին:

Այսօր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ Արագածոտնի մարզում կազմակերպել ենք «Տարեցների սոցիալական կարիքների ինչպես նաև սոցիալական ծառայությունների նոր մոդելների նկատմամբ տարեցների ու նրանց ընտանիքի անդամների պահանջարկի ուսումնասիրություն» թեմայով քննարկում:

Առանձնացված 3 ֆոկուս խմբերում նպատակ ունենք կատարել տարեցների սոցիալական ծառայություններ ստանալու կարիքների գնահատում ու գնահատված կարիքներին համապատասխան տարեցների համար սոցիալական ծառայությունների նոր մոդելների ներդրման ծրագրերի մշակում:

Տարեցների հետ քննարկմանը կմասնակցեն մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության, մարզի չորս տարածաշրջանի համայնքապետարանների սոցիալական բաժինների աշխատակիցները, ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային

ծառայությունների, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների աշխատակիցներ:

Նման քննարկումները կտան ճիշտ վերլուծություն կատարելու հնարավորություն և մոդելի ձևավորման ռեալ հնարավորություն :

Տարեցները մեր վաղվա օրն են և մշտապես գտնվում են մեր ուշադրության կենտրոնում: Նրանց բարեկեցությունը և աջակցությունը մեր առաջնային նպատակներից է :

Տարեցների համար կենտրոն ստեղծելը կլուծի նրանց համար շատ հարցեր: Շնորհակալություն ենք հայտնում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և հայտնում մեր պատրաստակամությունը ծրագրին աջակցելու հարցում:

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդ
(ՀՕՖ) Հայաստանի մասնաճյուղի հետ համատեղ առողջապահական ծրագրի
I փուլի ամփոփում

2016թ. ՀՕՖ Հայաստանյան գրասենյակի զարգացման գծով փոխտնօրեն, առողջապահական ծրագրերի ղեկավար Համբարձում Սիմոնյանի հետ ձեռնամուխ եղանք ՀՀ Արագածոտնի մարզում իրականացնել այս ծրագիրը, որը ընգրկում է 0-18 տարեկան բալիկներին:

Մարզի առողջապահության վարչությունը ներկայացրել է առողջական խնդիրներ ունեցող 350 երեխայի ցուցակ: Երեխաների խնդիրները շատ տարբեր են: Քննարկման արդյունքում կատարվեց խմբավորում ըստ առաջնահերթության: Այսօր I փուլը ամփոփելով ցանկանում են շնորհակալություն հայտնել ամերիկահայ բարերար Արփի Հովնանյանին, ում բարեգործության շնորհիվ Արագածոտնի մարզի տարբեր համայնքներից ընդգրկված առողջական խնդիրներ ունեցող 19 երեխա ստացել է բժշկական խորհրդատվություն և անհրաժեշտ միջամտություն մայրաքաղաքի առաջնակարգ կլինիկաներում:

Քանի որ ներկայացված երեխաների թիվը անհամեմատ մեծ է, ներկա պահին դիտարկվում է ծրագրի II փուլի հնարավորությունը, որի շնորհիվ ևս մի քանի երեխաներ հանարավորություն կստանան օգտվելու իրենց այդքան անհրաժեշտ բժշկական աջակցությունից:

Հարգելի պարոն Համբարձում Սիմոնյան մեր աշխատանքը գնահատեցիք արդյունավետ: Ուզում են շնորհակալություն հայտնել Ձեզ մեր համատեղ արդյունավետ աշխատանքի համար:

Յուրաքանչյուր երեխայի առողջության խնդիրը լուծելիս լույս եք վառում այդ
ընտանիքում, համայնքում, մարզում: